ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 368:656.07

**Հ.Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Գ.Ռ. ԲԱԲԱՅԱՆ, Ռ.Պ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
Շ.Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԵՌԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Բեռի ապահովագրությունը ոչ կյանքի ապահովագրության գծով կամավոր ապահովագրության ամենատարածված դասն է: Բեռի ապահովագրության ապահովագրական պոտենցիալի վերլուծությունը շատ կարևոր է, քանի որ այն արտացոլում է ապահովագրական շուկայում առկա իրավիճակը, զարգացման հնարավորություններն ու շուկայում առկա նախադրյալները՝ ապահովագրական ընկերությունների հետագա զարգացման ռազմավարությունը ճշգրիտ պլանավորելու համար:

Առանցքային բառեր. բեռի ապահովագրություն, սակագին, ներմուծում, արտահանում, ապահովագրական պոտենցիալ:

Բեռի ապահովագրության ՀՀ ապահովագրական շուկան ձևավորվում է ներմուծված, արտահանված և երկրի սահմանների ներսում փոխադրվող բեռների ընդհանուր ծավալի հաշվին: Բեռների ապահովագրությունը ՀՀ-ում իրականացնում են բոլոր 6 ապահովագրական ընկերություններում, որոնք կիրառում են խիստ որոշակի սակագներ՝ կախված տարբեր հանգամանքներից:

Պոտենցիալի վերլուծությունը շատ կարևոր է ապահովագրական շուկան ընդլայնելու, նոր համագործակցության առաջարկներ մշակելու, բացասական գործոնների ազդեցությունը բացահայտելու համար, քանի որ ներկայումս ՀՀ ապահովագրական ընկերություններն օգտագործում են բեռի ապահովագրության գծով առկա պոտենցիալի 12-15%-ը: Այս տեսանկյունից ուսումնասիրության թեման արդիական է՝ կապված ապահովագրական շուկայի ընդլայնման և առկա պոտենցիալը հնարավորինս արդյունավետ օգտագործելու հեռանկարի հետ:

Հետազոտության նպատակն է պարզել, թե ՀՀ ապահովագրական ընկերությունները բեռների ապահովագրական շուկայի պոտենցիալը ինչպես են օգտագործում, և առաջարկել օգտագործվող պոտենցիալը մեծացնելու հնարավոր ուղիներ: Այս նպատակին հասնելու համար նախ անհրաժեշտ է փաստացի տվյալների հիման վրա հաշվել ՀՀ բեռների ապահովագրության շուկայի առավելագույն պոտենցիալը:

Ապահովագրական պոտենցիալը հաշվելու համար անհրաժեշտ է նախ որոշել ՀՀ-ում ապահովագրության ենթակա ամբողջ բեռների, այսինքն Հայաստանի

Հանրապետություն ներմուծված, արտահանված և երկրի սահմաններում փոխադրվող բեռների ծավալները՝ դրամական արտահայտությամբ: Այս տեղեկատվությունը հասանելի է «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության» էլեկտրոնային կայքում [1]:

Նկ. 1-ում ներկայացված են 2017-2021թթ. Հայաստանի Հանրապետություն ներմուծված և արտահանված բեռների բացարձակ արժեքները՝ ԱՄՆ դոլարով:

Նկ. 1. 2017-2021թթ. Հայաստանի Հանրապետություն ներմուծված և արտահանված բեռների ծավալները, մլն ԱՄՆ դոլար

Հիմնվելով վերը նշված տվյալների (նկ.1) վրա և ընդունելով, որ ՀՀ ներմուծված և արտահանվող բեռների ավելի մեծ ծավալ (30-40%) ընդգրկելու դեպքում բեռների ապահովագրության սակագինը կարելի է նվազեցնել միջին հաշվով 0.12%-ով, իսկ ՀՀ ներսում փոխադրվող բեռները՝ 0.04% ապահովագրական սակագնով, հաշվել ենք բեռների ապահովագրության գծով ՀՀ ապահովագրական շուկայի առավելագույն պոտենցիալը 2017-2021թթ. համար: Վիճակագրական տվյալները և հաշվարկի արդյունքները ներկայացված են աղյուսակում՝ ԱՄՆ դոլարով:

Աղյուսակ

Բեռների ապահովագրության գծով ՀՀ ապահովագրական շուկայի առավելագույն պոտենցիալը 2017-2022թթ. , ԱՄՆ դոլար

Տարի	Ներմուծման և արտահանման գումարային տվյալներ	Ներմուծման և արտահանման արդյունքում գանձված ապահովագրավճարը (0.12%)	Ներքին բեռնաշրջանառության (ներմուծված բեռների 90 %) հաշվին գանձված ապահովագրավճար (0.04%)	Ապահովագրական պոտենցիալը
2017թ.	6,335,000,000	7,602,000	1,474,920	**9,076,920**
2018թ.	7,388,000,000	8,865,600	1,791,360	**10,656,960**
2019թ.	8,187,000,000	8,824,400	1,993,680	**10,818,080**
2020թ.	7,120,000,000	8,544,000	1,649,880	**10,193,880**
2021թ.	6,876,000,000	8,251,200	1,928,520	**10,179,720**

Ապրանքաշրջանառության ներքին ծավալների հաշվարկի ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ապրանքը Հայաստանի Հանրապետություն մուտք գործելուց հետո դրա շրջանառությունը չի ավարտվում: Դրա մի մասը բաշխվում է երկրի ներսում, բացի այդ երկրում արտադրված ապրանքների (հիմնականում սննդամթերքի) զգալի մասը փոխադրվում է ՀՀ տարածքում, ուստի ՀՀ ներքին բեռնաշրջանառության ծավալը վերցրել ենք մոտավորապես ներմուծման ծավալների 90%-ին հավասար:

ՀՀ կենտրոնական բանկի տվյալների համաձայն՝ 2017-2021թթ. 1 ԱՄՆ դոլարը արժեցել է համապատասխանաբար՝ 486, 483, 487, 522 և 480 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով սա և աղյուսակում բերվածը, կարող ենք ասել, որ բեռների ապահովագրության գծով շուկայի ապահովագրական պոտենցիալը 2017-2021թթ. համապատասխանաբար եղել է՝ 4,411,383; 5,147,311; 5,268,404; 5,321,205 և 4,886,265 հազար ՀՀ դրամ:

Այժմ համեմատենք ՀՀ-ի բեռների ապահովագրական շուկայի առավելագույն պոտենցիալը համապատասխան տարվա փաստացի գանձված ապահովագրավճարների հետ (նկ.2) [2-7]:

Նկ. 2-ից երևում է, որ 2017-2021թթ. ՀՀ ապահովագրական ընկերություններն ապահովագրել են շուկայում ապահովագրության ենթակա բեռների 14.4 – 20.8% մասնաբաժինը, իսկ իրականում կիրառվող 0.25% միջին սակագնի դեպքում այն կկազմեր 6.91-9.98%: Այսպիսով, 2017-2021թթ. ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից գանձված ապահովագրավճարները կազմել են հնարավորի 20.8, 17.6, 18.9, 14.4 և 19.1%-ները համապատասխանաբար:



Նկ. 2. 2017-2021թթ. բեռների ապահովագրության գծով գանձված ապահովագրավճարները և շուկայի ապահովագրական պոտենցիալը, հազար ՀՀ դրամ

Ինչպես երևում է Ազգային վիճակագրական ծառայության տվյալներից, արտահանման և ներմուծման ապրանքաշրջանառության ոլորտում կա բեռների ապահովագրության մեծ պոտենցիալ, որը կարող են ներառել ՀՀ ապահովագրական ընկերությունները: Բացի դրանից, բեռի ապահովագրության գծով ՀՀ ապահովագրական շուկայի պոտենցիալի ավելացմանը կարող են նպաստել նաև ներքին բեռնափոխադրումների ապահովագրության մշակույթի ձևավորումն ու զարգացումը: Հայաստանյան շատ ընկերություններ, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության տարբեր ճյուղերում, կարող են բեռնափոխադրումների ապահովագրությունը կիրառել որպես պոտենցիալ կորուստների նվազման միջոց:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ ներքին բեռնափոխադրումների ապահովագրության դեպքում ապահովագրության դասական եղանակը (այսինքն՝ յուրաքանչյուր փոխադրվող բեռների խմբի համար կնքվում է ապահովագրության պայմանագիր) չի աշխատի, քանի որ պայմանագրի կնքման գործընթացը պահանջում է առնվազն 2-3 ժամ, իսկ ներքին փոխադրումը կարող է տևել ավելի կարճ: Այս պարագայում ապահովագրական պատահարը կարող է վրա հասնել նախքան

պայմանագրի կնքումը, ինչը կարող է հանգեցնել «Չկա պայմանագիր, չկա հատուցում» իրավիճակին: Այսպիսով, ներքին բեռնափոխադրումների ապահովագրության պարագայում ավելի նպատակահարմար կլինի կնքել ապահովագրության գլխավոր պայմանագիր 1 տարի ժամկետով և ապահովագրավճարը ներառել ապրանքի ինքնարժեքի մեջ: Արդյունքում, ի հաշիվ ինքնարժեքի չնչին բարձրացման, ապահովադիրը ապահովագրված կլինի հատուցում չստանալու ռիսկից: Օրինակ, 1 շիշ 0,5 լիտր գարեջրի ապահովագրավճարը կկազմի ինքնարժեքի 0,04%-ը (500 դրամ x 0,04%= 0,2 դրամ):

Եզրակացություն. Քանի որ ներկայումս ՀՀ ապահովագրական ընկերությունները օգտագործում են բեռների ապահովագրական շուկայի պոտենցիալի շատ փոքր մասը (6.91-9.98%)՝ կիրառելով միջին հաշվով 0.25-0.35% ապահովագրական սակագին, ապա կիրառվող ապահովագրական սակագինը աստիճանաբար նվազեցնելու միջոցով (մինչև 0.12%) հնարավոր կլինի մեծացնել բեռների ապահովագրության ապահովագրական պոտենցիալի ներառումը ապահովագրական շուկայում:

Առաջարկում ենք ապահովագրական ընկերություններին բանակցել պարենային մթերքներ արտադրող և Հայաստանում իրացնող ընկերությունների հետ՝ կնքելով նրանց հետ բեռի ապահովագրության գլխավոր պայմանագիր 1 տարի ժամկետով: Այդ ընկերությունները ապահովագրավճարները պետք է ներառեն մթերքի ինքնարժեքի մեջ և յուրաքանչյուր ամսվա վերջում հաշվետվություն ներկայացնեն ապահովագրական ընկերությանը առաքված արտադրանքի վերաբերյալ: Դրա հիման վրա ապահովագրողները կհաշվարկեն ապահովագրավճարը և հաշիվ կներկայացնեն ապահովադրին: Ապահովագրական պատահարի դեպքում ապահովադիրը ապահովագրողին կտեղեկացնի այդ մասին, որից հետո ապահովագրողը կկատարի ապահովագրական հատուցում՝ գլխավոր պայմանագրի պայմաններին համապատասխան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ինտերնետային կայք՝ «ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն», - http://www.armstat.am/am/?nid=126&id=10004&submit=Փնտրել:
2. Ինտերնետային կայք https://armeniainsurance.am/interim-fin-reports/
3. Ինտերնետային կայք https://ingoarmenia.am/
4. Ինտերնետայի կայք https://imnairi.am/company/about?lng=hy#section-35
5. Ինտերնետային կայք http://www.reso.am/arm/107/free.html
6. Ինտերնետային կայք https://www.rgs.am/hy/reports/265/2022/quarterly-reports
7. Ինտերնետային կայք http://www.silinsurance.am/

Г.И. КАРАПЕТЯН, Г.Р. БАБАЯН, Р.П. ОГАННИСЯН, Ш.О. АРУТЮНЯН

ОЦЕНКА СТРАХОВОГО ПОТЕНЦИАЛА СТРАХОВАНИЯ ГРУЗА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Страхование груза является наиболее распространенным видом добровольного страхования. Анализ страхового потенциала страхования грузов имеет важное значение, поскольку отражает текущую ситуацию на страховом рынке, возможности развития и существующие предпосылки на рынке для точного планирования будущей стратегии развития страховых компаний.

Ключевые слова: страхование груза, тариф, импорт, экспорт, страховой потенциал.

H.I. KARAPETYAN, G.R. BABAYAN, R.P. HOVHANNISYAN, SH.H. HARUTYUNYAN

ASSESSMENT OF THE INSURANCE POTENTIAL OF INSURING CARGO IN REPUBLIC OF ARMENIA

Cargo insurance is the most common type of voluntary insurance. The analysis of the insurance potential of cargo insurance is very important, as it reflects the current situation in the insurance market, the development opportunities and the existing prerequisites in the market in order to accurate by plan the future development strategy of insurance companies.

Keywords: cargo insurance, tariff, import, export, insurance potential.

ՀՏԴ 368:656.07

Հ.Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Շ.Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՓՈԽԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ԲԵՌԻ) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Բեռի ապահովագրությունը ոչ կյանքի ապահովագրության գծով կամավոր ապահովագրության ամենատարածված դասն է: Բեռի ապահովագրության սակագնի հիմնավորումը շատ կարևոր է թե՛ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը հիմնավորելու և թե՛ շուկայում ապահովագրական ընկերությունների մրցունակությունն ապահովելու տեսանկյունից:

Առանցքային բառեր. բեռի ապահովագրություն, սակագին, նետտո դրույքաչափ, բրուտտո դրույքաչափ:

Ներկայումս ՀՀ ապահովագրական շուկայում բեռի ապահովագրությունն իրականացնում են բոլոր 6 լիցենզավորված ընկերությունները, որոնք հիմնակա-